

**Առաջին ուղղաթիռային թռիչքը դեպի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն**

Մամուլի հաղորդագրություն

03. 06. 2019 թ.

Օրերս «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամն (ՔՈԱՖ) ու Armenian Helicopters ավիաընկերությունը նոր, հեռանկարային համագործակցության սկիզբ դրեցին: Տեղի ունեցավ առաջին ուղղաթիռային թռիչքը դեպի Լոռու մարզի Դեբետ համայնքում գտնվող ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն:

*«ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ը գյուղական համայնքների զարգացմանը նպաստող նորարարական կենտրոն է: Armenian Helicopters-ի հետ համագործակցությունը առավել արագ հասանելի կդարձնի ՍՄԱՐԹ-ը մեր տեղացի ու արտերկրից ժամանած հյուրերի համար, ովքեր հաճախ ժամանակի սղություն ունեն»,*- ասում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը**:

Հետաքրքրական է, որ ավտոմեքենան Երևանից ՍՄԱՐԹ է հասնում երկու ժամում, մինչդեռ ուղղաթիռն այդ ճանապարհն ընդամենը կես ժամում է անցնում: Այսինքն, ՍՄԱՐԹ կենտրոնն հասնելը դարձել է ավելի հեշտ ու արագ, քան Երևանի մի հատվածից մյուսը տեղափոխվելը: ՔՈԱՖ-ի և Armenian Helicopters-ի համագործակցությունը Հայաստանի գյուղական վայրերն էլ ավելի հասանելի կդարձնի աշխարհի համար: Նաև կզարգանա փոքր ավիացիան, որը Հայաստանի տուրիստական ոլորտի զարգացման համար խիստ կարևոր է:

Քանի որ մինչև 3. 5 տ քաշ ունեցող ուղղաթիռները հատուկ թռիչքահարթակ չեն պահանջում, թռիչքի անձնակազմն ինքն էր ընտրել վայրէջքի ամենահարմար կետը՝ հենց ՍՄԱՐԹ կենտրոնի ճեմուղու դիմաց: Ուղևորները կարող են վայրէջքից հետո անմիջապես ճեմուղով քայլել ու մտնել կենտրոն:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնն այժմ նշում է իր մեկամյակը, և խորհրդանշական է, որ Armenian Helicopters ավիաընկերության հետ համագործակցությունը հենց այս օրերին է մեկնարկել՝ մեկ անգամ ևս շեշտելով ՔՈԱՖ-ի՝ գյուղական համայնքների նորարարական զարգացմանը նպաստելու առաքելությունը:

Համագործակցությունը կարևորում է նաև ավիաընկերության տնօրեն **Արսեն Մանուկյանը**. *«Մենք ՔՈԱՖ-ի հետ գործընկերության սկիզբ դրեցինք, և ես դա խիստ նշանակալից եմ համարում: Այժմ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնն էլ ավելի հասանելի կդառնա այն հյուրերի համար, ովքեր խիստ կարևորում են իրենց ժամանակն ու*

*ցանկանում են արագ հասնել իրենց ուզած վայրը: Նաև պլանավորում ենք համագործակցել ՍՄԱՐԹ կենտրոնի խմբակներում ընդգրկված պատանիների հետ: Կարող ենք, օրինակ, թվային նկարչությանը զբաղվող երիտասարդների հետ համատեղ ծրագրեր սկսել»:*

ՍՄԱՐԹ կենտրոնի սաներն էլ էին խիստ ոգևորվել իրենց տարածքում իրականացված առաջին ուղղաթիռային թռիչքով: Ինչպես նշեց ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ղեկավար **Քրիստ Մարուքյանը**, «Շատ կարևոր է, որ ՍՄԱՐԹ կենտրոն հաճախող երեխաները ևս մեկ անգամ տեսնեն, որ աշխարհի հետ հաղորդակցվելու ձևերն ու հնարավորություններն անսահմանափակ են»:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի ու Armenian Helicopters ավիաընկերության խոստումնալից համագործակցությունը կնպաստի Հայաստանի գյուղական վայրերի նորարարական զարգացմանը, տուրիզմին, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների տարածմանը:

*«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:*

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսակական՝ **ՍՄԱՐԹ նախաձեռնություն**: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսին՝ ծառայելու մարզի շուրջ 150 հազար բնակիչներին:

«Armenian Helicopters» ընկերությունը հանդիսանում է ուղղաթիռների միակ կոմերցիոն շահագործողը ՀՀ-ում (AOC), որը իրականացնում է ուղեւորների, փոստերի եւ բեռների փոխադրում՝ թեթեւ դասի ուղղաթիռներով, (մինչեւ 3100 կգ առավելագույն թռիչքային քաշով), ինչպես ներքին, այնպես էլ՝ միջազգային ուղղություններով: Ընկերությունը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում:

Գործունեության հիմնական տեսակը կոմերցիոն թռիչքների իրականացումն է: